

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2020 թ. հունիսի 18-ին կայացած թիվ 9 առցանց նիստի

Գիտական խորհրդի նիստն անցկացվել է առցանց հեռավար համակարգով, խորհրդի 39 անդամներից նիստին մասնակցել են 30-ը:

Օրակարգում՝

1. Կենդանաբանության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:
3. Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՄԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանի հաղորդումը՝ կենդանաբանության ամբիոնում 1 դրույքաչափով ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը ներկայացրեց տեղեկություններ ընտրվող թեկնածուի՝ կ.գ.դ., պրոֆեսոր, կենդանաբանության ամբիոնի գործող վարիչ Մարինե Սեմյոնի Առաքելյանի մասին (կից ներկայացվում է մրցութային հանձնաժողովի եզրակացությունը): Արտահայտվեցին նաև բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ գրանցել կենդանաբանության ամբիոնի գործող վարիչ Մարինե Սեմյոնի Առաքելյանին փակ (գաղտնի) քվեարկության ցուցակում՝ ամբիոնի վարիչի պաշտոնում (1 դրույքաչափ) ընտրվելու համար և փակ գաղտնի քվեարկությունն անցկացնել հեռավար, հետևաբար չընտրել հաշվիչ հանձնաժողով:

2. **ԼՄԵՑԻՆ՝** տեղեկություններ առցանց համակարգով անցկացրած փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, խորհրդի ներկա անդամներից քվեարկությանը մասնակցել են 28 անդամ: Քվեարկության արդյունքներն ամփոփվել են համակարգչի օգնությամբ. կողմ՝ 26, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1:
2. Մարինե Սեմյոնի Առաքելյանին համարել ընտրված կենդանաբանության ամբիոնի վարիչի (1 դրույքաչափ) պաշտոնում:

3. **ԼՄԵՑԻՆ՝** առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թոչունյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թոչունյանը: Գիտական ղեկավարների կողմից ներկայացվեցին տարվա ընթացքում ասպիրանտների կատարված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտների կողմից կատարվել են պլանով նախատեսված աշխատանքները և ամբիոնների կարծիքները՝ ատեստավորել առկա ուսուցմամբ ասպիրանտներին.

1. Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ երկրորդ տարվա առկա ասպիրանտ Հեղինե Խաժակի Գևորգյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.դ. դոցենտ Կ. Ա. Թոչունյան):

2. Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ երկրորդ տարվա առկա ասպիրանտ Սուսաննա Աշոտի Գևորգյանին (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆ. Ա. Հ. Թռչունյան):

3. Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առաջին տարվա առկա ասպիրանտ Վահագն Սմբաթի Գևորգյանին (գիտական ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. պրոֆ. Ս.Գ. Նանագյուլյան):

ԼՍԵՑԻՆ՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի կողմից ներկայացված Հ.Հ. Փանոսյանի, Ա.Ա. Մարգարյանի, Ի.Լ. Բազուկյանի և Ա.Հ. Թռչունյանի՝ «Մոլեկուլային մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել «Մոլեկուլային մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման:

Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ ընտրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, կենսաբանության ֆակուլտետի ղեկանի տեղակալ՝ կ.գ.թ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Տվյալ հարցի վերաբերյալ վերջնական որոշումը կկայացվի նոր ուսումնական տարվա սկզբին:


ԼՄԵՑԻՆ՝ 2020-2021 ուսումնական տարում ուսումնական գործընթացի առցանց կազմակերպման հնարավորության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, ամբիոնների վարիչները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ներկայացնել առաջարկ/նախագիծ՝ ամբիոնների գծով սպասարկվող դասընթացների լաբորատոր և գործնական պարապմունքներն առցանց եղանակով անցկացնելու ձևաչափի վերաբերյալ:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան